ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ա. ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1798 Թ. ԿՈՆԴԱԿԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄԱՄ) թ. 4501 ձեռագրի մեջ ի թիվս Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի (1780-1799) բազմաթիվ նամակների եւ կոնդակների սեւագրություններ, գրանցվել է նաեւ 1798 թ. գրված մի կոնդակի սեւագրություն, որը հասցեագրված է Ռուսաստանում բնակություն հաստատած հայերին:

Կոնդակում Ղուկաս Կաթողիկոսը նկարագրում է այն ծանր վիճակը, որի մեջ հայտնվել էր երկիրը Ագա Մահմեդ խանի կողմից Հարավային Կովկասում եւ Ատրպատականի հյուսիսում պարսից տիրապետությունը վերահաստատելու փորձերի ժամանակ: Երկիրը թալանվում էր: Էջմիածնի վանքը հայտնվել էր ծայրաստիճան աղետալի դրության մեջ: Ազատելու համար վանքը գրավվելու եւ թալանվելու վտանգից, Կաթողիկոսը հարկադրված էր անընդհատ փրկագներ տալ: Պարտքերն ավելանում եւ բազմապատկվում էին: Խառնակությունների տարիները (հատկապես 1790-0794 թթ.) ըստ Վ.Հափտառի «գրեթէ հայաթափ արին զսուրբ Տունս եւ մաշեցին զկեանս մեր»: Սակայն, չնայած այդ ամենին, Էջմիածնի վանքը «մնաց ի չինութեան եւ ի պայծառութեան իւրում»: 1798 թ. Կաթողիկոսն իր ներկայացուցչին ուղարկում է Ռուսաստան եւ խնդրում ռուսահայերին օգնություն ցույց տալ Էջմիածնին՝ «Զլիաձեռն տուրս մատուսջիք վասն սրբոյն Աթոռոյս ի լցումն բազմակերպ պակասութեանց սորին»:

Կոնդակում Կաթողիկոսի ներկայացուցչի անունը բաց է թողնված մաքրագիր օրինակի մեջ լրացնելու պայմանով, ինչպես ընդունված էր այն ժամանակ:

Բ. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ 1800 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՈՒՂԵՐՁԸ ՂԱՐՍԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այս փաստաթղթի սեւագրությունը գրանցվել է կաթողիկոսական կոնդակների եւ նամակների մատյաններից մեկի մեջ, որն այժմ պահվում է ՄԱՄ՝ 2922 համարով: Կոնդակը գրվել է Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի մահից 10 ամիս անց՝ 1800 թ. սեպտեմբերի 28-ին: Նրա շարադրման առիթը Երեւանի խանության մեջ քաղաքական ու տնտեսական չափազանց խառն վիճակն էր, որի հետեւանքով ոչնչանում էին նաեւ միաբանության արտերն ու այգիները: Միաբանությունը զրկվել էր ցորենի եւ գարու պաշարներից. վանականներն ու վանքի այցելուները կանգնած էին անխուսափելի սովի առջեւ:

Ուստի միաբանները դիմում են Ղարսի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին, քահանաներին, իշխաններին, վաճառականներին, ինչպես եւ, առհասարակ, աշխատավոր ժողովրդին, մանրամասն նկարագրում իրենց համար ստեղծված ծանր կացությունը եւ խնդրում՝ «օգնութիւն արարէք սրբոյ Աթոռոյս լցուցանելով զապականութիւնս ցորենոյ եւ գարւոյ»: Կոնդակից կարելի է պատկերացում ստանալ այն ահավոր կացության վերաբերյալ, որ ստեղծվել էր Արարատյան երկրում եւ Էջմիածնի վանքում որպես հետեւանք քաղաքական անկայուն վիճակի եւ մեկը մյուսին հաջորդող օտար ուժերի ավերիչ արշավանքների:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.

Կոնդակ ի վերայ երկրին Ռուսաց, ծանուցումն զվնասուց սրբոյ Աթոռոյս եւ զնեղութեանցն ի գալն յայսկոյս ներքինի բռնաւորին եւ եղբօր նորին յԵրեւան, եւ խնդիր՝ օգնութիւն առնել սրբոյ Աթոռոյս ի լցումն բազմազան պակասութեանց սորին՝ յանձնելով զտուրսն նորոգ նուիրակին:

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան, հանդերձ հոգեպարար շնորհօք քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս եւ համայն ապտուածակիր սրբութեանցն եւ հրաշագործ մասանցն սրբոյց, որք ապտ, ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց եւ լուսածնունդ զաւակացդ սրբոյ Գահիս՝ հայկասէր եւ լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք ի տիրախնամ երկրիդ Ռուսաց՝ ի ներքոյ խնամոց ապտուածակառոյց ինքնակալ մեծի կայսէրն Պաւլ Պետրովիչի եւ ամենափառազարդ կայսերուհւոյն իւրոյ եւ ծիրանածին թագաժառանգ որդւոցն Քրիստոսի զօրացելոց՝ Ալեքսանդր Պաւլովիչին եւ Կոստանդին Պաւլովիչին, եւ համայն կայսերազանցն ի կայսերանիստ մայրաքաղաքդ ի Պետրպօլք եւ ի Մոսկով, եւ ի բարեճոխ քաղաքդ՝ ի Հաշտարխան, ի Նոր Նախիջեւան, ի Ղզլար, ի Մօզտօք եւ Եագորեցկի, ի Սառաֆան, ի Բօրաղան, ի յԵղսէ, ի յԱնդրեա, ի Քօստակ, ի Չէրքէզ, ի յԱբազա, ի Կեամուկու, ի Կապարիեսլաւ, ի յԵնկիղալա եւ ի Նորաշեն քաղաքդ Գրիգորուպոլ եւ ի բոլոր երկրիդ Ղրիմու, եւ յայլ ամենայն հեռաւոր եւ ի մերձաւոր տեղիս լայնատարած երկրիդ կայսերկանի՝ ի գաւառս, ի գիւղաքաղաքս՝ ուր եւ զտանիք յօրհնեցելոյ ազգէս Հայոց:

Նախ, վայելչապատիւ առաջնորդ Յովսէփ ապտուածիմաստ արքեպիսկոպոսիդ եւ ապա ճշմարտուսոյց վարդապետաց, սրբապաշտօն քահանայից, բարեպաշտ եւ ճոխապատիւ իշխանաց եւ մեծատանց, իրաւասէր դատաւորաց, հաւատարիմ գործակալաց եւ գանձապետաց, հանճարամիտ վաճառականաց, վայելչագործ արուեստաւորաց, արդարավաստակ հողագործաց, երկիւղազարդ տանտիկնաց եւ այլ համայն ժողովրդականացդ դասուց առհասարակ՝ մեծաց եւ փոքրուց, արանց եւ կանանց, ի Տէր խնդալ:

(Շնորհք):

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս ապտուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց ի Տէր եւ հոգեւոր զաւակացդ Մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի: Զի իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմօն ասէ, թէ իմաստոյ աչք ի գլխոյ իւրում, որ կարէ եւ այսպէս իմացեալ լինիլ, թէ նկատումն տեսութեան եւ զգուշութիւն իմաստնոյ վասն գլխոյ իւրոյ: Քանզի որովհետեւ սկիզբ նա եւ պատճառ կենդանութեան եւ կառավարիչ այլ ամենայն անդամոց գլուխն է (առանց որոյ ոչ է հնար ապրիլ կենդանւոյն): Վասն որոյ հարկաւորի մարդս նախապէտաբար գլխոյն պահպանութեան ջանս դնել եւ նորին առողջութիւնն կամիլ եւ ապա այլոց անդամոցն:

Արդ, սիրելի եւ հոգեւոր որդիք մեր խորհրդական գլուխ է օրհնեցելոյ ազգիս Հայոց սուրբ Աթոռս Էջմիածին եւ Մայր հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց, որք ամենեքեան առ ի սմանէ ունին զհոգեւորական սնունդ եւ զլրութիւն կարգաց եւ շնորհաց եւ կատարելագործութեան: Եւ թէ ամենայն կենդանիք ըստ բուսոյ բարուց բնութեան ջանան պահպանել զգլուխս իւրեանց, ուրեմն եւ լուսածնունդ զաւակքդ սորին եւ անդամքդ հոգեւորք այսմ

խորհրդական գլխոյ ըստ իմաստնոյն բանի պարտիք իմաստնաբար զաչս ձեր ունիլ առ սոյն գլուխ ձեր վասն պահպանելոյ եւ օգնելոյ ըստ մարմնաւորին, որպէս եւ որչափ կարիցէք: Իսկ պահպանելն եւ օգնելն, մանաւանդ ի ժամանակի նեղութեանց եւ փորձութեանց եւ պակասութեանց հարկաւորի:

Եւ արդ, զի՞նչ թշուառալից եւ բազմավտանգ եւ դառն ժամանակ մեզ, քան զայս, յորում բարդեցան եւ դիզացան ի վերայ երկրացս պատահարք չարագոյնք եւ աղէտք անհնարինք, եւ զեղան ի վերայ սրբոյ Տանս եւ մեր բազմակոհակ ալիք փորձութեանց եւ վնասք չափազանց եւ նեղութիւնք անտանելիք: Զորս մի ըստ միոջէ գիտեմք, զի երկարի յոյժ, վասն որոյ թողեալ զանդէպ երկարութիւնն, ի կարճոյ գրեսցուք: Քանզի ի թուոջ Փրկչին 1794, յորում ներքինի բռնաւորն զոմն յազգայնոց իւրոց ոստիկան էր յղեալ ի Թաւրէզ՝ հնազանդեցուցանել զիշխողսն կողմանցս, եւ տիրօղն երկրիս ոչ կամէր հնազանդիլ, ի շարժիլ նորա յայս կոյս, թէ զորքան տագնապս կրեցաք եւ իշխօղն տեղւոյս, որ ամրացուցանէ զբերդն, թէ զի՞նչ պահանջմունս արար ի մէնջ եւ էառ, մնասցէ այն, զի մրրիկն էանց յայնմ ամի եւ դադարեցաք:

Այլ ի 1795 թուին ներքինի բռնաւորն ինքնին յարեաւ ի վերայ կողմանցըս, եւ եղբայրն իւր դժնդակ ըստ ինքեան՝ յղեաց ի վերայ Երեւանու: Եւ իշխօղ տեղւոյս յայնմ եւս էառ ի մէնջ ըստ նախընթաց ամի աւելորդ առեցելոց եւ ի բնակչաց երկրիս զմասն մի ժողովեաց ի բերդն եւ ամրացաւ: Եւ զայլսն ամենայն վարեաց ի կալուածս օսմանցւոց եւ յայլ կողմն, եւ մեզ եւս հարկեաց գնալ ի սրբոյ Աթոռոյս ուր եւ կամիցիմք, զոր եւ բազումք իսկ ասացին եւ գրեցին, եւ մեք գիտէաք, թէ գնալն մեր յայլուրեք ապահովութիւն լինիւր մեզ (տե՛ս ի վերոյ յերեսն .....2149 ի կոնդակն Ղարսայ) եւ յորժամ յիշեալ դժնդակ եղբայրն ներքինւոյն եկեալ զօրօք բանակեցան յանդիման բերդին, գնացաք առ նոսա՝ խորհելով թէ զորչափ ինչ նեղութիւնս եւ վիշտս կրիցեմք անձամբք, եւ որքան ինչ ծախք լինիցի, ձեռօք տայցեմք, միայն թէ շինութիւն սրբոյ Գահիս անաղարտելի մնասցէ: Եւ նոքա իբր պատուով ընկալան զմեզ, եւ քաղցրութիւն ցուցին: Բայց յազահութենէ բռնադատեցեալք ընդ չափաւոր ընծայսն մեր ոչ հաճելով, զբազմապատիկ պահանջեցին զդրամսն եւ զայլ իրս: Եւ որքան ընդդիմացեալ աշխատեցաք եւ տարժանեցաք յաւուրս բազումս, չեղեւ հնար չափաւորաւն անցուցանելոյ, ապա որչափ ինչ առ մեզ գտանեցաւ, զպակասն եւս յայլոց փոխ առեալ եդաք, թէ այնու զերծանիցիմք յորոգայթէ որսողացն:

Բայց եդ վճարելոյ մեր զայն, սկսան վասն ներքինի բռնաւորին զընծա խնդրել այնքան ծանր, մինչ զի եթէ զհանդերձս մեր եւս վաճառէաք, ոչ լինիւր վճարել: Այլ ի քանիս աւուրս նոքա պահանջելով եւ մեք յանձն չառնելով, մինչեւ նոցա եւ տանջանս սպառնալ ոմանց ի վարդապետաց մերոց: Ապա... եւ ընծայապէս տրոցն զորքան եւս ուտելիս եւ ըմպելիս եւ զայլ բազմազան պիտոյս տանէին ի սրբոյ Աթոռոյս, թէեւ մերովս գիտութեամբ: Կացեալ մեր ի զազիր եւ ի զարշահոտ բանակի... հաշտութիւն անկաւ ի մէջ զօրապետին եւ զօրապետն զմեզ իբր խիլայիւք շահեալ արձակեաց առ սուրբ Աթոռս, եւ ինքն առեալ զպատանդս ի խանէն, չու արար առ եղբայրն իւր ներքինի բռնաւորն:

Զկնի ոչ բազում աւուրց, յորս կայաք ի հոգս վճարելոյ պարտուցն մերոց, ի վերայ այնմ տարակուսանաց՝ լուաք զդառնաղէտ բօթս... Յետ ուղեւորելոյն նորա, վերոյիշեալ ժանտ եղբայրն ներքինւոյն կրկին եկն յԵրեւան, արկանել զբերդն ընդ ձեռամբ իւրեանց եւ պահակս կարգել, եւ այլ ոմն խան եւս ընդ նմա ի ներքինւոյն վասն մեր զխիլայս երեր, որոց աղագաւ

մինչ վերստին գնացաք յԵրեւան, զգինս խիլայիցն քանապատիկ տուեալ խիլայաբերին եւ զազանամիտ եղբօր ներքինւոյն, հազիւ թափեցաք զօձիս մեր յանկուշտ ազահութենէ նոցին:

Իսկ յետ այսոցիկ եւս մինչ ներքինին զուղտս էր խնդրեալ ի Երեւանու, զքառասունն եւս ի մէնջ պահանջեալ, զոր ինչ ունէցաք, տարան, եւ զպակասելոցն եւս զգինսն երկպատիկ առին:

Այսչափ նեղութիւնք եւ վնասք եղեն մեզ ի 1795 թուէն մինչեւ ի 1796 թուոյ սկիզբն: Յանժամ եւս, թէ որքան նեղեցաք եւ վշտացաք, եւ յակամայ կամս զընծայս առաքեցաք առ մահաթոյն վիշապն ներքինի, յաղագս զերծ առնելոյ զմեզ եւ սուրբ Գահիս ի մեծավնաս զրպարտութեանց, թողումք զայնոսիկ:

Իսկ ի 1797 թուին, մինչ ներքինի բռնաւորն կրկին շարժեցաւ յայս կողմն եւ զոմանս իշխօղս երկրաց եւ զտեղւոյս խանն իսկ կողոպտեաց, եւ զյիշեալ ժանտ եղբայրն իւր յղեաց յԵրեւան, անօրէնն այն դարձեալ վերստին զնոյնպիսի ծանր պահանջմունս արար ի մէնջ, որպէս եւ յառաջին յերկուս նուազս արարեալ էր, եւ զաւուրս քառասուն դեգերեալ մեր յԵրեւան քաղաքի, որչափ եւ վաստակեցաք թեթեւեցուցանել զծանրութիւն պահանջմանցս, ոչ եղեւ հնար: Վասն որոյ զմեծ մասն տուաք, եւ վասն մնացելոյն անճարացեալ մուրհակ մատուցաք:

Այլ ոչ եւս յամեցեալ դատաստանացն Աստուծոյ, յաւուրսն յայնոսիկ ներքինի բռնաւորն ի յԱրցախու դղեկին խողխողեցաւ եւ ամբարշտագոյն եղբայրն եւս աստ նկուն եղեալ եւ անարգանօք դարձաւ յետս, եւ մինչ փութայր թագաւորութեան հասանիլ, յերկուց աչացն զրկեցաւ: Եւ արդ, թէպէտ զկնի այնչափ վնասուց եւ տառապակրութեան ապրեցաք ի ժանեաց դաժանագոյն զազանացն, որոյ աղագաւ զոհութիւն եւ փառք բարերար Փրկչին մերում, որ ոչ ետ զմեզ, յորս ատամանց նոցա, այլ ոչ իսպառ վերջացեալ անագորոյն ցեղին, այլ եւս եղբօր որդին նոցա բռնակալեաց, եւ զնոյնակերպ վնասս կրեմք: Որպէս յայսմ ամի ի փետրվարին հարկեցեալ յիշխողէն տեղւոյս զոչ սակաւ տուրս ընծայից առաքեցաք, եւ ի յունիսին եւս նախ զօրապետն իւր եւ զկնի ինքն եւս եկեալ մինչեւ ցխոյ, թէպէտ եւ ինքն փութով դարձաւ յետս վասն ապստամբութեան եղբօրն, սակայն ժանտ զօրապետն ի բազում աւուրս մնացեալ անդ, զպահանջումն արար ի մէնջ, զորս մանաւանդ ի բռնադատութենէ երկրականացս՝ առաքեցաք, եւ մինչ էիս առ նա ընծայն մեր, դարձաւ եւ նա, ոչինչ օգուտ արարեալ կողմանցս, բաց ի վնասուց:

Եւ այսպէս, իւրաքանչիւր բռնաւորքն անիրաւեալք եւ զանզգամարար պահանջելն եւ յափշտակելն միայն գիտեն, այլ զինամելն ամենեւին ոչ: Ուստի յայս չորս տարիս գրեթէ զոյաթափ արարին զսուրբ Տունս եւ մաշեցին զկեանս մեր անմիջոց պահանջմամբ եւ վշտացուցմամբ: Եւ թէպէտ զոհունակ եմք զՏեառնէ Աստուծոյ, որ ի լինիլ այնքան վրդովմանց եւ աւերութեանց, ամենազօր ողորմութեամբն նորին սուրբ Աթոռս ի շինութեան եւ ի պայծառութեան իւրում անդրդուելի ի հինից բարբարոսաց՝ հանդերձ մերձակայ վանորէիքն ի մխիթարութիւն օրհնեալ ազգիս մերոյ, բայց զի ի վերայ այսքան վնասուց, ելքն առաւեալ է սրբոյ Տանս եւ մուտքն նուազեալ, եւ բազում իրաց պակասութիւն նեղեն զմեզ, տարակուսեալ վարանիմք ի դժուարութիւնս կառավարութեան գերահոչակ սրբոյ Գահիս, եւ յայլ ուստրեքէ օգնութիւն ինչ ոչ ունելով, նախ յԱստուած ապաւինիմք, եւ ապա ի բարեպաշտութենէ ձերմէ օգնիլ յուսամբք:

Վասն որոյ այժմ ի յուղարկելս մեր ի յօրհնեալ երկիրդ եւ առ ձեզ նուիրակ զհոգեւոր որդիդ մեր՝ զտէր... ասպուածիմաստ վարդապետդ եւ զարհի եպիսկոպոսդ, գրեցաք ընդ դմա զայս կոնդակ որոշակի, ծանուցանելով ասպուածասէր ժողովրդոցդ մերոց զդառնաղէտ դիպուածսն կողմանցս, եւ զանհուն վնասսն սրբոյ Աթոռոյս եւ զտրաժանելի կիրսն մեր: Բայց զի՞արդ կարելի էր զամենն մի ըստ միոջէ պարունակեալ ի թղթի ասպ, եւ զի՞նչ վայելուչ իցէր զբովանդակ արարս խուժականացն անասպուածից համարձակ արձանացուցանել ասպանուօր: Այլ զօմանս երեւելի անցսն գրեցաք, որոց եւ փոքր ի շատէ սիրելիդ մեր եւ առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսդ մերձ զոլով յայսկոյս յայնմ միջոցի, գիտակ է: Իսկ առաւելապէս հաւատարիմ նուիրակդ մեր ի սկզբանէ եղելութեանցն մինչեւ ցայժմ ականատես եւ ականջալուր զոլով՝ զամենեսն ստուգութեամբ կարէ պատմել ձեզ բերան առ բերան, որով եւ քաջայայտ լինի ձեզ, որ թէ ի դրամոց յեկեղեցական ապասուց, թէ ի բազմութենէ զրաստուց եւ թէ յայլ զանազան պիտոյից պակասեալ կամք, եւ յազահամիտ բռնաւորաց դեռեւս նեղիմք: Եւ թող զմիաբանից կենցաղավարութիւն, երթեւեկացն բազմութիւնք եւս անպակաս:

Ուրեմն, ի լսելն եւ յիմանալն սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց զայսոսիկ աղէտս մեր զապականութիւնս, հարազատ որդիաբար ի գութ շաժեալ ցաւակից լիջիք սրբոյ Աթոռոյս՝ Մօրս ձերոյ լուսատուի եւ հոգեւոր հայրութեանս մերոյ, եւ յոժար սրտիւք իւրաքանչիւրդ ըստ կարողութեան ձերում, օգնել կամելով ի նեղութեանս մերում յատկապէս իբրեւ իմաստիա զլիաձեռն տուրս մատուսջիք վասն սրբոյ Աթոռոյս ի լցումն բազմակերպ պակասութեանց սորին: Որով կարիցեմք եւ եւս կառավարել զսա իւրավայելուչ պայծառութեամբն ի պարծանս ձեր եւ ի փառս Աստուծոյ: Եւ զոր յատուկ օգնութեան անուամբ առատաձեռանել կամիցիմք, շուտով յանձնեսջիք սիրելի որդւոյդ մերոյ եւ ծայրագոյն նուիրակիդ ձերոյ... գերզգօն վարդապետիդ եւ արհի եպիսկոպոսիդ՝ հասուցանել ի սուրբ Գահս եւ առ մեզ: Որով եւ երեւեսջիք իմաստունք ըստ ... բազմապատկապէս հատուցցէ ձեզ, օրհնեսցէ զգործս ձեռաց իւրաքանչիւրացդ, զառս եւ զտուրս ձեր եւ զարուեստս, զայգիս եւ զանդաստանս եւ զանդեայս ձեր, եւ զարդիւնս դոցին առատացուցանելով լի արասցէ զամենայն պէտս ձեր: Եւ որպէս դուք յայսմ ... եւ ի խնամս իւր պահեսցէ միշտ: Եւ որքան սաղմոս երգիւք, աղօթք, պաշտամունք եւ սուրբ պատարագք եւ շնորհաբաշխութիւնք կատարին յաստուածաբնակ սուրբ տաճարիս, յայնցանէ մասն եւ բաժին առատ եղիցի ձեզ կենդանեացդ եւ համօրէն ննջեցելոց ձերոց: Ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1798 եւ ի ....., ի լուսանկար Աթոռս Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին:

ՄԱՄ, ձեռ. 4501, էջ 2422-2425

Բ.

1800 թ. 28 սեպտեմբերի – Կոնդակ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ Ղարսայ երկրի ժողովուրդսն. խնդիր օգնութիւն առնել սրբոյ Տանս ի ցորենոյ եւ ի գարւոյ, մինչ աւերագործ զօրքն պարսից եկեալ բազում վնասս հասուցին սրբոյ Աթոռոյս եւ զարտորայս վատնեցին, եւ ոչ զտան իւր բաւական ապրուստ յառաջիկայն:

Ի լուսանկար յաստուածահրաշ եւ յերկնահանգէտ մեծէ Գահէս Հայաստանեայց սրբոյ Էջմիածնէ, ի սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի եւ ի պատուական սուրբ խաչէ Նորին եւ ի կոդամուխ սուրբ Գեղարդէն, եւ ի շնորհաբաշխ աջոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. եւ ի սոցին պաշտօնէից քահանայակարգ միաբան եղբարցդ՝ այսինքն՝ յեպիսկոպոսաց, ի վարդապետաց եւ յարեղայից ժամանեսցէ ողջոյն փրկչաւանդ եւ օրհնութիւն ասստուածային, բարեպաշտ սիրելեացդ մերոց եւ հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս հայկազուն եւ լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք յաստուծախնամ քաղաքդ Ղարս եւ ի շրջակայ բարեճոխ գաւառսդ, ի դասապայս եւ ի գիւղորայս: Նախ յարգելի եղբօրդ մերում, շնորհընկալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս եւ վայելչապատիւ եւ փառազարդ իշխանաց, իմաստնահոգի վաճառականաց, հանճարեղ քեահիայից, վայելչագործ արուեստաւորաց, քրտնավաստակ հողագործաց, ժրագլուխ տանտիկնաց եւ համայն քրիստոսասէր օրհնեալ ժողովրդոցդ առհասարակ՝ մեծաց եւ փոքունց, արանց եւ կանանց ի Տէր խնդալ: /Շնորհք/:

Եւ ընդ օրհնութեանն ասստուածայնոյ ծաներուք, սիրեցեալք մեր ի Տէր եւ լուսածնունդ զաւակք Մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի: Զի ըստ որում բոյս է բարուց մարդկայինս բնութեան ի նեղութիւնս եւ ի վիշտս ձայն բառնալ առ մերձաւորս եւ ծանօթս եւ բարեկամս եւ կոչել ի վշտակցութիւն եւ ի յօգնութիւն, մեք եւս նարդենիս նեղեալ եւ վշտացեալ եւ տարակուսեալ գոլով, առ մերձաւոր սիրելիսդ ձայն արկանեմք՝ ըստ օրինի ճշմարիտ բարեկամութեան ցաւակից լինիլ եւ նպաստ մխիթարութեան մատուցանել մեզ՝ փորձանակրացս եւ նեղելոցս:

Քանզի որպէս եւ յայտնի է, ահա ինն ամիսք առ Տէր փոխեցման հոգիալոյս սրբազան Կաթուղիկոսին մերոյ, յորս կամք որբք եւ անտերունջ, եւ ի վախճանմանէն հետէ որքան եւ հոգացեալ աշխատեցաք եւ փոյթ տարաք արժանաւոր յաջորդ Կաթուղիկոսի, իբր զի անյապաղ ժամանիցէր յայցելութիւն սրբոյ Աթոռոյս եւ ողորմելի միաբանութեանս ընդդէմ յուսոյն մերոյ՝ աղմկաց եւ շփոթից լուրք հնչեցին յականջս մեր: Եւ մինչդեռ ի տարակուսանս այնոցիկ տագնապէաք, վերստին բորբոքեցաւ բոցն պարսկական բռնութեան յայսկոյս, որ շահզատայն եւ Սուլէյման սարտարն բազմութեամբ զօրաց եկեալ ի Թաւրէզ, եւ անտի յառաջ խաղացին ի Նախչուան: Յորմէ զարհուրեալ իշխողին Երեւանու, ամրացուցանէր զբերդն եւ զբնակիչսն երկրիս տարագրէր յայդր եւ յայլ կողմն, որպէս գիտէք: Առ որ եւ զպարիսպ Սրբոյ Աթոռոյս խորհելով ամրացուցանել յուղարկեաց աստ զքանի գլխաւորս բազմութեամբ զինուորաց իբրու պահպանել զպարիսպս եւ ոչ տալ մուտս թշնամեացն: Բայց եկեալ զինուորքն աւազակք էին, քան թէ պահակք: Որք յամսօրեայ ժամանակի կացեալ աստ ձիովք իւրեանց կերին զառ պատրաստ ապրուստն մեր եւ դատարկեցին զհամբարանոցսն եւ նորպէս ցորեան խնդրէին ամբարել ի պէտս ժամանակի բերդարգելութեանն, որ չէր կարելի պատրաստել ի սուղ միջոցին:

Եւ ի վերայ այնմ խաբէութեան, զոր ինչ տեսանէին, գողանային, եւ զոր ինչ պէտք համարէին, յափշտակէին, որով յայտնապէս իմացեալ լինէր, թէ ոչ պատերազմողք, այլ մանաւանդ աւարիչք են, որք ի գալ թշնամեացն կողոպտելոց են զորքան ինչ կարեն տանիլ եւ փախստական լինելոց: Եւ յարտաքուստ եկեալ թշնամիքն աւերելոց են զսուրբ Տունս: Վասն որոյ ոչ կամէաք ամենեին մնալ նոցա ասպ:

Եւ իբրեւ տեսին զտիաճութիւն մեր առ ինքեանս, ի միում երեկոյի հանին զմեզ զամենեսեանն արտաքս ի պարսպէն՝ առաջադրելով, թէ գնասջիք յԵրեւան եւ ի Ղարս եւ յայլուր, մեք պահելոց եմք զպարիսպս: Իսկ մեք բազմութեամբ դիմեալ յԵրեւան, առ խանն արզ արարաք, թէ սոքա ոչ կարեն պահպանել զսուրբ Աթոռս մեր, այլ յեր իւրեանցն յափշտակութեան փախչելոց են, եւ սուրբ Տունն մատնելոց է թշնամեացն եւ խանգարելոց:

Զայսպիսի բազում բանս խօսելով եւ դրամս եւս խարճելով, խելամուտ արարեալ զիշխողն եւ զկամակիցսն, հանել տուաք ասպի զգունդն անզգամ զողոց, եւ մեք մնացաք ի սուրբ Աթոռոջս ահիւ եւ երկիւղիւ մեծաւ, միայն յողորմութիւնքն Աստուծոյ եւ ի շնորհ սրբոյ իջման տեղւոյն ապաստանեալ, խորհելով թէ թէպէտ եւ տառապանք եւ վիշտք եւ վնասք հասցին մեզ, սակայն սուրբ Տաճարս տէրունական անվտանգ մնասցէ:

Եւ իբրեւ զօրապետն պարսից եկեալ իջեւանեցաւ յանդիման բերդին Երեւանու, զործակալ վարդապետքն մեր գնացին ի տեսութիւն: Եւ նա ըստ պարսկական խորամանկութեանն առ երես զքաղցրութիւն ցուցեալ, շնորհեաց եւ զքանիս անձինս, զորս ի մերազնէից գերեալ էին, եւ զչափաւոր ընծայն մեր եւս ընկալաւ, բայց յեր աւուրց ինչ զհարիւրաւոր պահակս յղեալ նստոյց ի վերայ պարսպաց մերոց, եւ խաբէան հնարիւք սկսաւ զզանազան պահանջմունս առնել՝ երբեմն վասն իւր, եւ երբեմն վասն շահզատային եւ մեծ սարտարին, եւ երբեմն յանուն շահին: Եւ մեք զորքան ինչ կարողացաք տալ, տուաք, իսկ առ այն, զոր չէաք բաւական վճարել, չկամեցաք յանձն առնուլ՝ պատասխանելով, թէ մնասցէ մինչեւ Կաթողիկոսն եկեալ վճարիսցէ:

Այլ խիստ եւ կատաղի դահիճքն ոչ աղաչանաց մերոց անսացեալ եւ ոչ ի յանտերութիւնս մեր խնայեալ, եւ ոչ ի կամաւոր հնազանդութենէ մերմէ պատկառեալ, կախեցին զզործակալ վարդապետսն զոտից իւրեանց եւ սաստկապէս բրածեծ արարին երկիցս անգամ, եւ զայլ չարաչար տանջանս եւս սպառնային, եթէ ոչ վճարէաք զհրամայեալսն: Ուստի անճարացեալ, զոր ինչ գտանիւր դրամ սրբոյ Տանս եւ իւրաքանչիւր միաբանիցս, այլեւ ոմանց աշխարհականաց առ մեզ գտանելոց, եւ այլոց ոմանց աշխարհականաց առ մեզ գտանելոց, եւ այլոց ոմանց աւանդքն զամէն տուեալ դատարկացաք, ապա հազիւ թէ զերծաք:

Եւ ի վերայ այնքան դրամապահանջութեանն, զոր ինչ այլեւս պակասութիւն ունէր, անազորոյն եւ քաղցեալ զօրապետն եւ իւրայինքն, ասպուստ լցին առնլով, զողանալով եւ յափշտակելով զքուրձս, զպարանս, զկարպետս, զխալիչայս, զպղծեղէնս եւ զերկաթեղէնս, զձիս եւ զջորիս եւ զայլ ինչ: Այսուամենայնիւ, տիրաբար պահպանութիւն եւս չեղաւ յարտաքին վնասուց, այլ զօրքն սանձարձակք անլուր եղեալ զօրապետին, խանգարեցին զվանորայս սրբոց կուսանացն, զփայտակերտսն խորտակելով, զպատկերսն պատառելով, զդրունսն այրելով եւ զայլ ամբարշտութիւնս գործելով, զոր չէ ի դէպ երկարել: Նաեւ ի յանդասպանս մեր զմի հասկ գարի ոչ թողին, եւ զցորեանն եւս կիսով չափ հնձեցին, ի ներքուստ ասպի զալիւրն մեր առնուին, իբրեւ ծանօթ եւ բարեկամ, եւ արտաքոյ զցորեանն հնձէին, եւ

զայգիսն ապականէին իբրեւ անծանօթ թշնամիս: Որոց ապառում դժնդակաց զո՞ր մի ժանտութիւնն եւ զո՞ր մի չարիսն կարեմք պատմել, այլ զայս ասեմք, թէ ամենարդար դատաւորն վասն բազում մեղաց եւ անօրինութեանց մերոց յարուցեալ է զնոսա ի պատիժ աշխարհի: Եւ սակայն փառք եւ գոհութիւն մեծի բարերարութեան Նորա, որ թէպէտ թոյլ եւ այսքան վշտաց եւ փորձութեանց գալ ի վերայ մեր, բայց զսուրբ Տաճարս լուսանկար անխանգարելի պահեաց ի ձեռաց նոցա, որք ոչ յանդգնեցան ձեռնամուխ լինիլ ի սա, եւ ոչ ինչ վնասեցին առ շինուածս կամ առ անօթս սորին:

Այլ մեք կրեալ զնեղութիւնս եւ տառապանս ի նոցանէ մինչեւ ի յօգոստոսի եօթն, յորում աւուր ել բանակն նոցա եւ դարձ արար յետս, անտի մինչեւ ցայսօր եւս բնաւ ոչ զտաք զապահովութիւն, զի որպէս զերծեալ ոք ի ժանեաց առիւծու, եւ պատահիցի արջոյն, ըստ մարգարէին բանի նոյնպէս եւ մեք ազատեցեալ ի ձեռաց հեռաւոր թշնամեացն, դարձեալ անկաք ի ձեռս մերձաւոր յափշտակաց: Քանզի այն, ինչ ի դրամոց եւ յամենայն հարկաւոր պիտոյից դատարկեցեալ էաք, եւ դրամս պարտք արարեալ յերեւանցւոց զգարի եւ զիւղ եւ զայլ ինչ պէտս գնեցաք ի յապրուստ մեզ եւ զբաստուց մերոց: Երթեւեկքն այլազգեաց այնպէս թեւակոխեալ վատնեցին, մինչեւ կարօտ թողուլ զմեզ օր ըստ օրական կերակրոյն:

Յորոց զրկանաց մին եւ գլխաւոր այս, զի ի ներկայական հեծելաշարժութեան իւրեանց հարիւր յիսուն ձիաւորք եկեալ նստան առ մեզ յաւուրս ութ, եւ զոր ինչ կերլիս գնեալ էաք, սպառեցին եւ ապա ելին: Եւ զայլ եւ այլ պահանջմունս բռնաւորաց ոչ է պատէհ գրել ի թղթի յայսմիկ: (Մնացուածս արտորէից ցորենոյ, զորս)[1]: Յորմէ զարհուրեալ ամենայն բնակիչք երկրիս, իշխօղն ամրացաւ ի դղեակն, եւ այլքն ամենեքեան տարագիր եղեն յայդր կողմն, որպէս եւ գիտէք:

Եւ թէպէտ զմեզ եւս բռնադատեցին ելանել աստի, բայց գիտելով, թէ մինչ մեկնիցիմք ի սրբոյ Աթոռոյս, յաւարի է մատնիլոց սուրբ Տունս եւ խանգարելոց: Վասն որոյ ոչ կամեցաք խոյս տալ ուրեք, այլ մնացաք աստանօր ահիւ եւ երկիւղիւ մեծաւ, անօգնական յումեքէ, միայն յողորմութիւնն Աստուծոյ եւ ի շնորհ սրբոյն իջման տեղւոյն ապաստանեալ:

Իսկ թէ նախապէս ի յերկրացւոցս եւ թէ հետեւաբար ի հեռուստ եկելոց զօրացն զորքան նեղութիւնս եւ տառապանս, եւ զորչափ վնասս կրեցաք, անմարթ է ի թղթի յայսմիկ լիապէս ծանուցանել, եւ չէ իսկ հարկ երկարելն, որովհետեւ դուք մօտակայք եւ իբր դրացիք գոլով մեզ, բաւականապէս լուեալ եւ իմացեալ էք, եւ զմնացելոցն եւս տեղեկանելոց էք: Այլ զոր կարեւորն է այժմ համառօտակի գրեմք, զի ի դրամոց եւ յայլ զանազան պիտոյից եւ մանաւանդ ի պատրաստական ապրուստից թափեցաք եւ դատարկ մնացաք: Արտորայքն մեր վատնեցան, ըստ կիսոյն հնձեալք յօտարաց եւ ըստ կիսոյն սմբակահար եղեալք:

Ի վերայ այսր ամենայնի եւ վանորայք սրբուհեաց կուսանացն աղարտեցան, որ անտանելի ցաւ եւ կսկիծ է մեզ: Արդեօք ողբասցէ զողորմելիութիւն մեր, որք ցկեանս մեր տամք այնպիսեաց իբրեւ տերանց, եւ երբեք զշնորհ ինչ տիրաբար խնամոց ոչ տեսանեմք: Այլ դարձեալ փառք եւ գոհութիւն բարերար ակնարկութեանն Աստուծոյ, որ թէպէտ թոյլ եւ այսքանեաց վշտաց եւ փորձութեանց գալ ի վերայ մեր, բայց զսուրբ Տաճարս լուսանկար անվնաս պահպանեաց ի նոցանէ, որք ոչ յանդգնեցան ձեռնամուխ լինիլ ի սա:

1 Փակագծերի մեջ վերցրած բաժինը բնագրում ջնջված է: Նույնի հակիրճ տարբերակը գրված է 2561-2563 էջերի լուսանցքում:

Իսկ մեք զայնքան վնասս եւ զնեղութիւնս յանծանօթիցն կրեալ, յեր դարձ առնելոյ նոցա, ի ծանօթից եւս չունիմք բնաւին զապահովութիւն: Քանզի բազմութիւն երթեւեկացն անպակաս, եւ պահանջմունք ծախուցն նոյնպէս, իսկ մեք գոյաթափեալ եւ ընդ պարտուք անկեալ: Ամբարանոցք մեր դատարկեցեալ են ի հին ցորենոյ եւ գարւոյ եւ յայլ պիտոյից, եւ նորն ոչ եկն ի ձեռս մեր: Մնացուածքն արտորէից, զորս դեռ այժմ հնձել տամք, թէեւ առ ձեռն գայցեն՝ սերմանելոյ եւս չեն բաւական, մնաց թէ ուտելոյ այսքան բազմութեան միաբանից եւ մշակաց եւ երթեւեկացն:

Արդ, յայտնի եղեւ սիրելեացդ յամենայնի պակասաւորութիւնն եւ կարօտութիւնն մեր, որ առ պատրաստ զկերլիս չունիմք եւ գնովք ցորեան եւ գարի առնելով ոչ կարեմք բաւականացուցանել: Հեռաբնակ ժողովուրդքն մեր ոչ են ձեռնհաս օգնել մեզ, այլ դուք միայն էք կարող եւ ձեռնհաս օգնութիւն առնել սրբոյ Աթոռոյս, որպէս եւ յայլ ժամանակս արարեալ էք: Ապաքէն մնամք ձերդ ողորմութեան եւ օգնութեան՝ լցուցանել զկարօտութիւն մեր յառաջիկայ ձմռանս:

Վասն որոյ ահա զսիրելի եղբայրն մեր եւ զհարազատ միաբանն սրբոյ Գահիս՝ զՅոհաննէս խոհեմամիտ վարդապետն այսու օրհնաձիր եւ վշտապատում կոնդակաւս մերով առաքեցաք առ ասպուածասիրութիւն ձեր, զի եկեալ բերանով եւս ծանուսցէ սիրելեացդ զամենայն անցս եւ զնեղսակրութիւնս մեր, եւ խնդրեսցէ ի ձէնջ զիմտարտիայ ցորենոյ եւ գարւոյ ի լցումն պակասութեան կարեաց մերոց, ի հաստատութիւն շինութեան սրբոյ Աթոռոյս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ հրաշակերտողին զսա ի պարծանս օրհնեալ ազգիս հայոց:

Արդ, խնդրեմք ի բարեպաշտութենէ ձերմէ, զի որպէս ի ժամանակս տեառն Սիմէօնի եւ տեառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսացն ի յերկիցս ուտնակոխ լինիլն եւ վնասիլն երկրիս ի զօրաց եւ ի աղանալն բարեաց, գլխաւորապէս օգնութիւն արարիք սրբոյ Աթոռոյս լցուցանելով զպակասութիւնսն ցորենոյ եւ գարւոյ ի ձեռն բազմաշխատ առաջնորդ վարդապետիդ, որոցդ բարերարութեան բարի յիշատակն հռչակի մինչեւ ցայսօր, նոյնպէս եւ այժմ բարեյօժար կամօք ընկալջիք զառաքեցեալդ ի մէնջ զՅոհաննէս շնորհունակ վարդապետդ եւ առատաձեռնեսջիք զայնպիսի օգնութիւնս ի ցորենոյ եւ ի գարւոյ՝ ի լցումն պակասութեանց սրբոյ Տանս ձերոյ հոգեւորի, որով կայուն մնասցէ բարեկարգութիւն ժողովոյ միաբանիցս եւ հաստատուն կացցէ վայելչութիւն պայծառութեան ասպուածաբնակ սրբոյ Տաճարիս, մօրս ձերոյ լուսածնի: Եւ որպէս դուք ի յարդար վաստակոցն ձերոց նուիրիցէք առատապէս Տանս Աստուծոյ, եւ նոյն ամենաբարերան Աստուած առատաձեռնեցէ առ ձեզ զանսպառ զողորմութիւնն իւր, լի առնելով զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն, որպէս եւ ասէ սուրբ Աւետարանաւն, թէ չափ բարւոք թաթաղուն, զեղուն եւ շարժուն տացին ի գոգս ձեր, նովին չափով, որով չափէք՝ չափեսցի ձեզ: Օրհնելով օրհնեսցէ զանդաստանս ձեր եւ զգործս ձեռաց ձերոց յաջողեսցէ ձեզ, միշտ արդիւնաւորեսցէ եւ երկնից արքայութեանն արժանացուսցէ:

Եւ լիջիք յանձնեցեալք ի խնամս Տեառն եւ փրկեցեալք յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ, եւ զօրացեալք շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԽԹ /1800/թուոջս եւ ի սեպտեմբերի ԻԸ /28/, ի սուրբ Աթոռս Էջմիածին:

ՄԱՄ, ձեռ. 2922, էջ 2561-2564: